Երվանդ Նազարեթյան

Քեզ գտա նորից, թեև չգտա

Քեզ գտա նորից, թեև չգտա՝

Քառաթև ուղու բախվող ճամփեքին,

Ու կարծես ինքս ինձնից հեռացա,

Լուռ կղզիացա ես հենց իմ կողքին:

Բախվեցին իրար հայացքները մեր,

Մի ակնթարթում էջեր թերթվեցին,

Խոցված հայելուս՝ նորից կաթոցներ...

Ու ենթարկվեցի ծանոթ տարերքին:

Լուռ նայում էինք անծանոթի պես

Ծանոթ աչքերով՝ սառն ու բոցավառ,

Այրված կամրջի թռիչքը կարծես

Մեզ դարձրել է հարազատ օտար:

Նույն գարունն էիր, աշունը սրտիս,

Շողեր արձակող ջերմացնող արև,

Եվ ի պատասխան տանջվող ժպիտիս՝

Մեղմ շշնջացիր մի քնքուշ բարև:

Երկինք հառնեցին մտքերս խռով,

Մոխրացած հույզս սուրբ աղոթք դարձավ,

Գնում եմ անդարձ, բայց քեզ օրհնելով,

Եվ հեռանում եմ ճամփեքով խոնավ:

Քեզ գտա նորից, թեև չգտա՝

Քառաթև ուղու բախվող ճամփեքին,

Ու կարծես ինքս ինձնից հեռացա,

Լուռ կղզիացա ես հենց իմ կողքին: